ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը, որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 28 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԾԻԳ- ԲԸԱՇՁԲ13/5ՃՀ-1 ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում 24.06.2013թ-ին կնքված պայմանագրում 2014թ ապրիլի 23-ին կատարված փոփոխությունների և լրացումների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ No1:	Ա/ճ Մ-2-Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման Գորիս քաղաքով անցնող 4,5կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար կնքված պայմանագրի հավելվածով սահմանված աշխատանքների մի մասը նախատեսվել է իրականացնել 2013թ, իսկ մնացած մասը՝ կկատարվի հաջորդող տարիներին ՀՀ պետական բյուջեով միջոցներ նախատեսվելու դեպքում: ՀՀ 2014թ պետական բյուջեով հատկացվել են համապատասխան միջոցներ:
Փոփոխության նկարագրություն:	- ՏԾԻԳ- ԲԸԱՇՁԲ13/5ՃՀ-1 Գնման պայմանագիրը լրացվել է նոր թիվ 2.1 Հավելվածով՝ «Ծավալաթերթ-նախահաշիվ, Ա/ճ Մ-2-Երևան - Երասխ - Գորիս - Մեղրի - Իրանի սահման Գորիս քաղաքով անցնող 4,5 կմ հատվածի հիմնանորոգման 2014թ իրականացվելիք աշխատանքների: - Փոփոխվել է ՏԾԻԳ- ԲԸԱՇՁԲ13/5ՃՀ-1 Գնման պայմանագիր 1.3 կետը՝ սահմանվել է 2014թ իրականացվելիք աշխատանքների կատարման ժամկետը՝ 2014թ հոկտեմբերի 30-ը: - Ավելացել է նոր կետ, որը նախատեսել է 2014թ իրականացվելիք աշխատանքների համար հատկացվող գումարը: - Փոփոխվել են Գնման Պայմանագրի թիվ 3՝ «Օրացուցային գրաֆիկ» և թիվ 4՝ «Վճարման ժամանակացույց» Հավելվածները, որոնց մեջ արտացոլվել են 2014թ իրականացվելիք աշխատանքների կատարման գրաֆիկը և վճարումները:
Փոփոխության հիմնավորում:	ՀՀ օրենքը <<ՀՀ 2014թ պետական բյուջեի մասին>> և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Հասմիկ Օրդուխանյանին:

Հեռախոս՝ (010) 580523:

Էլ. փոստ՝ hordukhanyan@transportpiu.am: